««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 19.4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19.4 Ընդերքօգտագործման իրավունքի, ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը.

1) ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տու 10000-ապաս
2) վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տու 50-ապատիկ
3) շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսպատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տու 500-ապատի
4) գունագեղ քարերի, բացառությամբ վանակատի (օբսիդիանի), յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տու 10000-ապաս
4.1. Վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տու 100-ապատի
5) մետաղագործական, քիմիական, թեթև	բազային տու

և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	10000-ապատ
6) հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝	
- արդյունաբերական (շշալցման) նպատակով իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոմ 5000-ապատ
- արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոմ 500-ապատի
-բուժական (ռեկրեացիոն) նպատակներով արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոմ 500-ապատի
-մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար	արդյունահան նպատակներ սահմանված հանրագումա
7) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար՝	
ֆիզիկական անձանցից	բազային տոմ
իրավաբանական անձանցից	բազային տոմ 10-ապատիկ
8) ***(կետն ուժը կորցրել է 23.06.15 ՀՕ-112-Ն)***	
9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոմ չափով
9.1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման համար (2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը ժամանակահատվածում ներկայացված դիմումատուների դեպքում)՝ տարեկան	բազային տոմ
10) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի նպատակով միանգամյա իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոմ 100-ապատի
11) կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ	

մետաղական օգտակար հանածոյի հանույթի իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոն չափով
12) Մետաղական օգտակար հանածոյի պաշարների հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության համար՝	
13) Ոչ մետաղական օգտակար հանածոյի պաշարների հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության համար՝	
	բազային տոն չափով
	բազային տոն չափով»

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 206.	**Ստորերկրյա հանքային ջրերի և աղի արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը**

1. Ստորերկրյա հանքային ջրի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

Հանքային ջրի արդյունահանման նպատակը (նշանակությունը)	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակ արդյունահանված յուրաքանչյուր խ մետրի համար (դրամ)
Արդյունաբերական (շշալցման) նպատակով	5650
Արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով	230
Բուժական նպատակով, այդ թվում՝	
ա. բալնեոբուժման (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմերսում, հոգնա, խմելու միջոցով և այլն) համար՝	300
բ. ըմպելասրահներում օգտագործման համար՝	40
գ. ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով	75

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.3 մասում «բովանդակությանը» բառից հետո լրացնել «կամ ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող նյութերին կից չի ներկայացվել ընդերքաբանական փորձաքննության համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուրքի անդորրագիրը,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։